

□□□□□□□□ □□□□□□□ □□□□□ 14-□□ □□□□□ □□□□□□□□□□□ □□□□□□□□□□□□ □□□□□□□ □□□□□□□ □□□□□□□□□□

21 տարի առաջ՝ 1992 թվականի օգոստոսի 14-ին, Վրաստանի Ազգային գվարդիան մուտք գործեց Աբխազական ինքնավարության տարածք, Փսոու-Ինգուրի երկաթուղու հատվածի պաշտպանության պատրվակով: Այսպես կոչված «աբխազական գվարդիայի» մարտիկները կրակ բացեցին վրաց զինվորականների վրա: Ջինված դիմակայությունը վերաճեց վրաց-աբխազական պատերազմի:

Պատերազմը տևեց 13 ամիս եւ 13 օր, դրա հետեւանքն էին հարյուր հազարավոր փախստականներ եւ տասնյակ հազարավոր զոհվածներ: Թբիլիսին կորցրեց հսկողությունը Աբխազիայի տարածքի նկատմամբ: Ջինված դիմակայության ընթացքում վրացական կողմից զոհվեց շուրջ 15 հազար մարդ:

Օգոստոսի 14-ին, հակամարտության 21-րդ տարելիցին, Վրաստանի վարչապետը, կառավարության եւ խորհրդարանի անդամները, հասարակայնության ներկայացուցիչները Հերոսների հրապարակում ծաղկեպսակներով զարդարեցին երկրի տարածքային ամբողջականության համար զոհվածների հուշակոթողը, հարգանքի տուրք մատուցեցին հերոսների հիշատակին: